

մինչեւ ոտքս, վերև մտիկ տալով գեպի քեզ, ով յաւիտենական Հայր: Զգում եմ ու գիտեմ, որ Քո զաւակդ եմ: Հոգիների Հայր, Քո կեանքդ է իմ և իմայնոց մէջ. մեր հօգիները Քեզ ու Քո ճանապարհներդ այն ժամանակ լաւ կճանաչեն ու կհասկանան, երբ որ, արձակուելով երկրաւոր՝ հողեղեն կապերից, պարզ և պայծառ տեսութեամբ ազատօքն կարող են ամեն կողմից մարկ տալ ու հասկանալ թէ իրանց և թէ աշխարհքիս մէջ եղած կարգադրութիւնները:

Սրա համար ասում է Քո սուրբ խօսքդ երկրիս վրայ ապրող զաւակացդ բազմութեան. «Ես յեւ ու իմողնեմ, ու իւղիւմ»: Այնպէս որ՝ մենք կարող ենք տել. «Տէրն է իմ օգնական, ու ես չէմ լոիւնալ. մորդո ի՞նչ կարու է ինչ անել»:

(Թարգմ: ) Գ. Ե. Ա.

## ՊԱՏՄԱԿԱՆ

ՆԿԱՐԱԴԻՐ Ս. ՅՈՎՃԱՆՆՈՒ ՎԱՆՈՒՅ

ԵՒ

ՎԻՃԱԿԻ ՆՈՐԻՆ ԲԱԳՐԵՒԱՆԴԱՑ.

(Նարսանականիւն)

9.

Հասան-խանը որպէս տղրուկ իւր հպատակ և մերձ ի սահմանս իւր տաճկահայոց կարողութիւնն ու կեանքը ծծել է զինի՝ 1826ին արշաւանք մը ալ գործեց ի ուսւապատկան դաւառս ինչ, Նարի, Նպանախի և Ղարաբաղ. . . :

Նա իւր անյագ ծարաւը լցոյց յիշեալ դաւառաց բնակչաց արեամբ և հարստութեամբ, որ գիղեց և զբաղումն սրով խողիողեցդ առատաձեռն աւարաւ և քրիստոնեայ գերեօք ինչ գարձաւ ընդ կրունկն:

Վասն որոյ ոռուսք որ իրենց հպատակ ազգաց բարեկեցութեան

համար մեծ հոգս կըտանին՝ անյապաղ զօրք յղեցին նորա վրայ, որ յաղթուած յետո նահանջեց:

Այն տեսնելով Հասան-խան որ իւր ձեռնարկ կարեռը ելք մը չպիտի ունենայ, որ օր մը ոռուսք ներսէս Եպիսկոպոսի առաջադրութեամբ և օգնութեամբ Երևանայ նահանջին ալ պիտի տիրեն. յիշեալ թուէն մի տարի յետոյ—որ իրօք Երևան ու Ս. Եջմիածին ալ կառնուի—Հրաման տուաւ իւր ամենաչար արքանեակներին 15 օր ժամանակամիջոցում իւր իշխանութեան ներքեւ գտնուող հպատակ ազգաց թշնամեաց բաժին չը-թալնելու պատրօւակաւ, գաղթեցնեն իրենց անասնովք և կահ կարասեօք հանդերձ՝ քրիստոնէից ի Բայազիտ, Բագրեանդ, տաճկաց յԱրտաղ...:

Յետ այնորիկ Ս. Եջմիածնայ Տաճարի սուրբ սպասներն և այլն յափշտակեց, միաբաններէն ոմանց ձերբակալեց, ուղարկեց Նրեանայ բերդը, այլք ցիր ու ցան եղան. աննշտնք ոմանք մնալով անդ Ս. Տաճարին պահապան. ի նոցանէ 36 անձինք՝ կրօնաւորք և մշակք ևս Սթոռոյն մասն ինչ ապրանաց, ուղտքն և անդեայք առած եկան ի վանս սրբոյն Յովկաննու որ ի Բագրեւանդ, ուր կացին մինչ ցառումն Երևանայ, որոնցից մինն էր քիւրդ Յովկաննէս և այլ երկու եպիսկոպոսք՝ Ագուլեաց Բովմայ առաքելոյ վանուց Սիմէօն և. և Ստեփաննոս Ե. Զորագեղցին:

Հասան-խանը Մասեաց թոհ ու բոհ ստորոտները ապաստանած լինելով առափապայ ճանապարհացն բռնեց Արծափեցի Բանէեան Մանուկի գիրը, որ մի հայ երիտասարդ կըտանէր, Ներսէս Արքազանի անուան ուղիեալ:

Ո՞վ էր այդ Արծափեցի Բանէեան Մանուկը, նոյն ճգնաժամին Ի՞նչ գործ ունէր Ներսէս Եպիսկոպոսի... Հետ, կըհարցնես ընթերցնող:

Այս որքան հայ գաւառաց հարստահարութեանց նկարագրութիւնից կըհասկնաս ընակիչք ընկճուած էին օտար բազկի տակ, նոցա բարոյական ոյժը իսպառ մեռած յէր, հայ ազգի մէջ կային տակաւին անպարտելի անձինք, Խաչատուր վարդապետ, Ներսէս Եպիսկոպոս, նոյն Մանուկ և Պետրոս աղա Պալհաւունի,

Արդէն վերն ասացի, որ Մանուկը 1000 հայ հրացանաւոր առած իրաւիմ փաշայի հետ պարոից գէմ կըկուեր Ալաշկերտի մէջ:

Ուստի այդ ծրարը առիթ տուաւ Հասան-խանին իւր վրէժը լուծել նորանից, Յետ ուղարկեց զայնի հայադիտ Բահլուլ փաշային, որը բուռն զօրութեամբ քերել տալով՝ յայտնի իւր, նորա ներսէս սրբազանին և այն գրած ծրարը բացեց, ընթերցաւ բարձրաձայն իբր յանցանք վնասու, ապա նեռեց զայն վատուող հնոցին մէջ, մինչ այրեցաւ մոխիր դարձաւ, ինքն աներեւոյթ զօրութենէ ըմբռնեալ կարմրեցաւ. կրակ դարձաւ, մի քանի վայրկեան դանդաղելով գինովի պէս, հանեց իդուրս իւր քերանից յետագայ մահացու վճիռը — դահիճ, դահիճք, վրայ համէք, և վերջ տուեք դորա վնասաբեր կենաց եթէ փաքր միւս ևս մնայ կենդանի, գուցէ մեր կորուեան ևս պատճառ լինի:

Մանուկը արդէն զինուորներով և դահիճներով շրջապատեալ էր, յայնժամ ոչինչ կարող էր առնել, բացի այն՝ որ ինքն իրան պարտական համարեց, ձեռներն յերկինս առ. Աստուած կառկառելով առաց, «Հայր քու սիրոյդ և ազգիս, ոչ ոքի համար այսօր այստեղ կըզոհուիսիմ. հոգիս յօժար է, արդ ընդունէ զիս ի Քումի արքայութեան ի գունդս մարտիրոսաց, դահիճք վազեցին ի վերայ, բռնեցին զայն, կամաւ գլուխն խոնարհեց, օճառուած պարանը պարանոցն անցուցին, ձգեցին ի վեր և խեղդամահ ըրին»:

Մի քանի օր նորա գիակը ձգեցին այնպեղի տես ամենեցուն, որից յետոյ մահացելոյն ազգականք գալով բարձեալ տարան, թաղեցին զայն Արծափայ գերեզմանատան մէջ, իր նախահարց շիրմաց քով։

Նամակը այրուեցաւ ձեռք չկարողացանք քերել ոչ ևս նորա պատճէնը, սակայն ունկնդրաց ոմանց բերանացի աւանդութիւնից տեղեկացանք, որ յետագայ բովանդակութիւնն է պարունակած եղեր։

Գերապատիւներու նպիսկոպոս

Քաջարի Սրբազան Հայր.

Լսելով որ Զերդ Սրբազնութիւն տեղւոյդ ժողովրդեան մէջէն

աշխոյժ և ազդեցիկ երիտասարդներ զինուորագրած լինելով՝  
այնքիւք ճնշուած հօտիդ աղասման համար, կօգնէք ուուռ  
զօրապետաց պատերազմելով իսազին թշնամեաց դէմ:

Սրբազն Ցէր իսնդրեմ տացէք նոցա ևս մեր ժողովուրդն  
ալ անտանելի նեղութիւնից փրկելու աղագաւ եթէ հնար ինչ  
իցէ յառաջ խաղացուցէք Զեր բանակն անդր ի Բայազիտ, Աւ-  
նիմ ընդ ինւ կարգուած հազմուէն աւելի կորին հայ զինուորք  
մեր սահմանը հաօնելուն պէս մարտակից լինիմ ընդ Զեր, արդ-  
պիսով շատ դիւրին է յառաջ ևս երթալ զի ես գիտեմ իմին-  
ներս և Զեր քաջագործութիւնքը:

Զեր ամենաինարչ որդի Մանուկ Բանէեան:

Յորմէ յետոյ պարսիկք յաղթուեցան, ուուզք տիրեցին նոցա  
բազում եեղեաց, հաշոտութիւնը կայացաւ Ա. յա պատճառաւ  
Մանուկը խեղդուեցաւ, ներսէսը ողջ է Ա. էջմիածին շատ գա-  
ւառներով ազատեց պարսից բռնութեան լուծէն, իւր շուրջը  
գումարեալ բազմակոյտ ժողովուրդ մը ունենալու. համար, նա-  
չմուացաւ Ստրապականի հայոցն ևս:

1828-ին ուուս—պարսկական կնքուած դաշնագրութեան  
արամագրութեամբ երկուստեք գաղթականութեան թոյլտուու-  
թիւն եղած լինելով Ենոքեան Ստեփաննոս Եպիսկոպոս, Կեռա-  
րացի Բարսեղ Եպիսկոպոս, իւր օրհնութեան ս. կոնդակով ու-  
զարկեց ի Կորդրիքո, Կորճեայո, Յաղբակ, Սալմասո ի Հեր և  
Զարեանդ գաւառաց ոչ—մահմետական բնակչաց փոխագրել  
տալ ուուսին թողուած տեղերը՝ յԵրևան, ի Նախիջևան և ի  
Սիւնիս:

Նզքա մի ամբողջ տարի կիենց պաշտօնը շարունակեցին, մնո-  
տի յոյսեր նոցա յառաջ զնելով՝ պարսից հայաբնակ գաւառնե-  
րը թողին թափուր ի բնակչաց մնալով գէթ սակաւ ինչ անոտ  
և անձեռ տներ։ Խսկ գաղթեալք գնացին ռմանք կամաւ և ոմանք  
ակամայ իրանց բազմամեայ շինած տուն ու տեղ, այգիք և ան-  
դաստանք թողլով կարի յաւետ տոչորելովնոցա սրտեր, սակայն  
զայս առնէին ներսէս սրբազնի պատուիրակների ձայնին լսե-  
լով կամ պարսից հարստահարութիւնից զզուած գոլովի:

Է.

—Ոչ ոք լնտօիի բայց եթէ յիւրմէ —։ Այն ժամանակ մինչ ներսէս եպիսկոպոս ինկն իր մէջ կըհրճուեր, տեսնելով իրեն մօտիկ, իր բուն հայրենեաց ծոցը՝ ծուարեալ մի հոծ բազմութիւն հայ տարրեր, որոց բարեկարգութեան համար ոչինչ ջան ու ճիգ չէր խնայեր. միւս կողմէն Կարնեցի Աերովքէ անուն եպիսկոպոս մը դաւաճանութիւն կընիւթէր նորա դէմ, ոյր սակս զրկեցին զինք իւր սիրեցեալ հօտէն՝ տարամերժելով այն նորակաղմ փարախէն։ Այսպէս և աստ ի Բագրեանդ ի բաժնին թրքաց նմա գաղափարակից Գալուստ վարդապետի գործառնութեանց գէմ մեծամեծ խոշընդուռներ կըյարուցանէին Խւչ-Քիլիսէի իրեն թշնամի վարդապետներն։

—Զի՞ն մօտ ձի կապես կամ՝ աքցան կուգայ կամ կծան —ինչ որ ասացի վերը թուրք պաշտօնակալ փաշաներու համար, նոյնը պէտք է խորտովանիլ թեմական առաջնորդաց և վանահարց վերաբերութեամբ։

Բագրեանդայ առաջնորդ Սահակ եպիսկոպոսի վախճանմամբ, վախճանալով Գալուստ վ. որ նրան յաջորդեց, վանապատկան դրամարկղը յանձնեց Արէլ վարդապետին ի զգուշական պահպանութիւն, զի մի գուցէ առաջուայ նման ցաւալի գէպք մը ալ տեղի ունենայ, օր մը բգեշին կողմէն անդութ ոմն գայ առաջնորդարանի բանալիքն յափշտակելով խուզարկէ այնտեղ, գտնէ առ ձեռն գրամը վերցնէ և այնպէս պարապ տեղն կորադի: Արէլ վարդապետ յետոյ ուրանալով իւր համախոհից խորհրդով, կամեցաւ այնու միանդամայն առաջնորդական իշխանութիւնն անտի առնուլ աւստի չհանեց երեւան այլ ևս։

Այնուհետեւ մատնեցին զնա Բահրուլ փաշային, թէ Գ. առաջնորդը առանց քայ գիտութեան, առանց քեզ բան մը տալու որպէս իւր նախորդքն միայն Ա. Էջմիածնայ հոգեոր իշխանութեան հրամանով կարգուեր է վանահայր — առաջնորդ։ Այսպէս նորանից 1000 մարզիլ առնել տուին նմա։

Խիղճ յըրբն միևնույն ժամանակ վանուց շարժական և անշարժ կայքը հաշուել տալ Բահլուլայ՝ առ նախանձու Գալուստ

առաջնորդի, ամեն բանից տասանորդ տալով նմա:

Երբ մարդ չար միտք ունենայ զայլս վնասելոյ, կարծես անյա-  
ջող և յաջող գէպքեր չեն պակսիր նմա իւր առաջադրեալ  
նպատակն ի յանգ ածելոյ:

Աստի յեաոյ պարսկաստանէն մի ծանր կարաւան գալով վան-  
քին մերձ ցանուած արտօրէից մէջ թափեցիւր բեռներ, առ որս  
ուղարկելով իւր ծառայն Գալուստ վարդապետ առաց որ այդ  
տեղէն բառնան, այլ ինչ հեռի զեան չեղած տեղ դնեն. որք  
մորիկ յտալով բանից նորա, ծեծեցին, և ծառայն գլուխը կոտ-  
րած՝ գարձաւ առ տէր իւր: Մեք Գալուստ առաջնորդն իր ըն-  
կեր Խաչատուր վարդապետի տարած քաջագործութեան ժա-  
մանակէն կրնանչնանք. շուտով ծիաւորեալ նա իւր ընտրեալ  
գպիրներէն սարկաւագներէն և մշակներէն առած գնաց անոնց  
այնտեղէն վանելու, Մինչ նոքա զկարաւանն հեռացնել կը ջա-  
նային և ահա Սիմէօն և Աբէլ վարդապետքն ևս ծիաւորեալ  
վրայ հառան, ուր սաստիկ կռիւ մը ծագելով պարսիկներէն մին  
վարդապետաց միոյն հրացանի հարուածէն սպանուեցաւ:

Գալուստ առաջնորդի միտքը իրօք այդ բանի համար մար-  
դասպանութիւն չէր, այլ սակայն իւր թշնամիք այդ արին, որ-  
պէս զի իրու առաջնորդ բանին, պատասխանատուութիւն վե-  
րան մնալով կորսուի:

Փութով ամբաստանագիրը սպանուածի եղօր ... միջոցաւ  
պարսից արքայորդւոյն Աբաս-միրզայի ատեանն հասաւ. որը  
գրեց Բահլուլ փաշային սպանութիւն գործող վարդապետին  
կապանօք առ ինքն ի Դաւրէժ ուղարկել: Բայց և այնպէս Պա-  
յազտոյ տէրը միջնորդելով 6000 մարզիլ առաւ վանքէն տուաւ  
սատկածին արէն+ը ապա աղասուեցան, եկան Գալուստ և Ա-  
բէլ վարդապետքն, որի համար տարուած էին Բայազիտ:

Այս միջոց Ս. Էջմիածնայ Քիւրտ կոչեցեալ Խնուսցի Յով-  
հաննէս եպիսկոպոս ի հանդէս եկաւ տեղւոյս առաջնորդական  
Էշխանութիւնը ձեռք ձգելու նկատմամբ: Նորա համար նա ինք  
զինք մի մեծ հարուստ, մի նոր կրեսոս կը ձեւացնէր ունանց  
առաջ ասելով, շուտով գուշ զիս առաջնորդ ընարեցէք ձեզ,  
ծովի պէս անհատնելի գանձս կը կտակեմ ձեր վանքին, միայն թէ

այնտեղէն ու երկրէն դուրս գամբ:

Մինչ 1828-ին Երևանայ առման լուրը հնչեց ամեն կողմ՝ Արարատեան գաղթականք Բագրեանդէն... նոյեմբեր ամսայն մէջ վերտարձան իրենց տեղ ինչպէս և Եփրեմ Սրբազնագոյն կաթողիկոսը Հաղպատայ վանքէն փութաց իւր աթոռն ի Ս. Էջմիածին, որ նոյնպէս պարսից Հալածանքէն խոյր տալով Ներսէսի խորհրդով կը մնար այնաեղ:

Իսկ երբ Ս. Յովհաննաւ վաճքէն Ս. Էջմիածնայ միաբանքն հասան այնտեղ, յիշեալ քիւրդ Յովհաննէս եպիսկոպոս իւր ինչ ինչ ապօրինի գործոց համար, Ներսէսի առաջարկութեամբ բանադրուելով կաթողիկոսէն աստիճանագուր րկ եղաւ:

Անդանոր խուն ինչ միջոց ապաշխարելով երբ Ներսէս սրբազն ռուսիոյ Յարէն կոչուելով մեկնեցաւ անախ Վերսոտին Վեհապետէան Յովհէփ վարդապետի միջնորդութեամբ կարգն ընդունելով մոռաւ յեկեղեցին:

Բ.

Վերոգրեալ Արծափեղի Բանէեան Մանուկի նամակը առիթ տուած էր Բահլուկ Փաշային կասկածելու. նա ականջի վրայ չէր կարող քնանալ՝ բերդ պաշարը ռուսաց չմատնելու համար. Մանուկը իսեղդամահ տուած օրէն ի վեր պաշտօնագրով մը զեկոյց ուր անկ էր, ռուսի անյապաղ մօտ 3000 զօրը ռողարկուեցաւ ի Բայազիտ. որք տեղակալ Փաշայի կարգադրութեամբ չորսական անձ իւրաքանչիւր հայ տանց մէջ տեղ ընդունուեցան, ոյց օրապահիկը տանուտեարք պիտի հոգային ամենայն ծառայութեամբք հանդերձ:

Նոքա 16 ամիկ շարունակ մնացին հայ օթեակների մէջ մինչ Յունական խնդրի առթիւ ռուս—թուրքական պատերազմի ծագումը: Անպատութիւն չմնաց որ չգործադրուեցաւ այն որջերու մէջ, ուր կը բնակէին նոքա: Հացէ ջրէ կորեցին զանոնք, տեղւոյն ազգապետ աղա Յովհէփը մորթելով այնպէս գնացին:

Այս կը նէին ի սակա քինու ռուսաց, թէ դուք ևս որպէս նոքա քրիստոնեայ էք, կօգնէք նոցա:

Երբ 1829-ին պատերազմական դաշտը թնդանօթներ ահեղապէս կգոռային, ոտքի տակ ընկած գրեթէ բոլոր տաճկաստանի հայերը ահ ու դողի հազար ու մի կերպ նեղութեանց մէջ կը տապակէին:

Երբ ուսւո զօրքերն կարուց գիծը գեռ չէին անցել, թող զայնս Քալուլ փաշան օսմանեան զօրապետաց ոմանց թելադրութեամբ ի Բայազոյ 13 անձ իյերեւելեաց, որոց ծանօթ էր, ձերբակալեց ի Կարին, ուր առանց հարց ու փորձի բանտարկուեցան, զի մի գուցէ ազատ մնալով՝ ապստամբին և քաղաքը մատնեն ոռւսաց:

Յամենայն ժամ՝ կառավարութեան ամենահաւատարիմ հայերը, անհաւատարիմ ցոյց տալով՝ բռնակալք ոմանք մէջտեղ խառնակել կընկրտէին, ուրիշ ոչինչ, ինչպէս գործն ալ ինքնին փորձով ցոյց պիտի տայ:

Քանզի երբ ուսւո զօրքերն օգոստոս ամսոյ մէջ, աւուր քան և հօթներսրդի Բայազոյ անառիկ թերդին վրայ արշաւեցին, ի նոցանէ առաւել իմն շնորհ ունելու նպատակաւ նախ և յառաջ ինքն Բալուլ փաշան քրդական խառնիճաղանճ բանակն որպէս և միւս զօրքերն ի փախուստ ստիպեց, զորս ցրուելով անձնատուր եղաւ, ընդ առաջ գնալով նոյա, սիրով և պատուով ընդունուեցաւ:

Այսուհետեւ Բագրեանդայ այլ և այլ արիւնուուշտ աւագակապետներն՝ իւրաքանչիւր ոք ի նոցանէ մի քանի յիսնեակ անռապայ անձինքներէ բաղկացեալ հրոսախումբ մը ունենալով կամ հաւաքելով ընդ ձեռամբք իւրեանց քայլ առ քայլ յառաջնթաց ուսւո-զօրաց առջեւն հայ գիւղօրայքն կողոպտելով, սպանելով աւեր և ի չիք կըդարձնէին, որպէս հրդեհ իմն յառաջ գնալով:

Ի վերայ այսը ամենայնի տակաւին ինձ մնայ ասել հին Ասիոյ ծոցը համախմբուած սոյն խաւարասէր սերնդի համար, որ մի որոշ սկզբունքի և ազգութեան գաղափարի տէր չեն. այլ այսու որպէս հաց ճաշէլու արհեստի տէր ազգ սովոր են միշտ յաղթողի կողմն անցնել, նա ինչ ազգութեան ևս պատկանի, ձիաւորեալ կըծառայեն կամ լաւ ևս է ասել ակնդէտ կըսպասեն

բարեպատեհ ժամու զայլս կողոպտել, իրենց ընչաքաղցութեան ծարաւը լեցնել:

Ճշմարիոն ասած այդ աւելի դառնագոյն օրերին հայ համայնքի կարող գասի մէջ առաւել ևս անխարդախ, ազգաշէն անհատներ կը գտնուէին, քան թէ հիմա: Արծւոյն զօրքերն յառաջանալով ի Բագրեանդ և յայլուր նոքա հիւրասէր, աղղեցիկ, և կառավարչական տաղանդի տէր անձինք և եթ ի հայս գոտան:

Ուստի նոր տիրած գաւառակների կառավարչական ղեկը տեղական հայ մելիքաց յանձնեցին: Բագրեանդայ (նահիէ) գաւառին Ցէր Գրիգորեան Գալուստ աղան, Խաղկոտայ գաւառին պայծառ իշխան Ոսկան աղան, Վաղարշակերտու Տիրացունեան Գրիգոր աղան դարձեալ մելիքք կամ գաւառապետք անուանեցան:

Մինչ այսպէս ճաւճաւաձէ գեներալը երկրի բարեկարգութեան կարեռը ինդրով կըզբաղէր, մի քանի գիւղականայք հայոց գայժի ի բերան արեան քրտանց մէջ թաթաւեալ նորա ուաքն ինկան—ան աղա, քու հոգւոյն մեռնինք, Գօգչայու նաղիխանը. որ Երեանայ առման ժամանակէն ի վեր իր մի քանի ձիաւորներով փախեր, եկեր կըմնէր Բասենի մէջ, Պասկեիչի իրեն մօտիկնալու ձէնն լսելով՝ ինչպէս սատանէն իւաչէն, էնփէս լէ\*) Էնի հալածուած էնոր երեսէն, ընցնող իրիկուն եկաւ գիլու (գայլի) պէս մեր գեղերէն՝ Խաստուրայ, Զլկանուայ և Դաւոյայ ձեռքի հետ զարկեց, առ ու գերի Երեց 40 խօրօտիկ հարս ու աղջիկ, յըմէն (ամենայն) մեր եղած չեղած մալ ու գօլվաթ (ինչք, անասնեղէնք) չքուաւ, կերթէր աճմու (պարսից) մէջ: Մենք լէ (ևս) էտոր համար, էս լուսումութուն հան-

(\*) Եթէ չըսեմ այժմ միւս բառերի և Հնչիւների համար, գոնէ գէթ Բագրեանդայ և Տարօնայ արդի գործածական բարբառի գերանունները, ոչ այլ ինչ են, եթէ ոչ տաճկահայոց այժմեան մատենագրական լեզուի գերանուանց Ճիշդ տառադարձութիւնը՝ որ ո՞ւ է փոխելով կարտասանեն. ինչպէս էնի (անի կամ անիկա), էնոր (անոր), էտոր (ատոր), էնոնք (անոնք), էն (ան կամ այն), էս (աս կամ այս) և այլն և այլն:

քակտուր (շնչառպառ) զմեղի թալեցինք (ձգեցինք) քու ոոք, որ էնոնք: ի սէր Աստուծոյ, ազատես էն զալբմի (անիրաւ) ճանկէն (բռէն):

Այն ատեն վաղ ընդ փոյթ հայերից, ռուսներից և եղիդիներից մի վաշտ հեծելազօրաց ի հանդէս եկան գեներալի հրամանով, որք զհետ եղէն աւարառուաց, որոց Մաղկոտան լեռը հասնելով՝ առաջնին առին. սարսափելի ճակատամարտ մը տեղի ունենալով անդ ցիր և ցան ըրին նոյն նաղի խանի զօրաց, վարեալքն ի գերութիւն և զամենայն ինչս նոցա թափելով ի թշնամեաց, յաղթութեամբ վերադարձան և յանձնեցին յիշեալ գիւղացւոց, ուր իւրաքանչիւր ոք իրն ստանալով՝ իւր տունը գնաց օրհներգ ի բերան:

Սոյն կուուոյ մէջ եղիտիներից հինգ անձինք և եթ սպանուեցան, որք իրենց ազգակցաց հաճութեամբ բարձեալ բերին Ա, Յովհաննու վանուց մերձ, նորա ահմանին մէջ, իւր որբավայր, թաղեցան

Քանդի նոքա ևս ազգաւ քիւրդ են, իոկ կրօնիւք արևորդիք, որք իւր կիսաքրիստոնեայս ձեւանան. որոց իշխանական փառքը վաղ ուրեմն վերջինն ևս մոռցնել տալով իրենց՝ կամաւ ինկան մահմետական կրօնի գիրկը:

Ուստի ճաւճաւաձէ Վաղարշակերտէն փոքր ինչ զօրք առնելով հարկ համարեց երթալ ի նադնոց, ուր օսմանեան զօրքերէն պաշարելով յետո նահանջեց, բերելով ընդ իւր հայոց քանի ինչ գիւղօրէից բնակիչքն՝ գնաց, բանակեցաւ ի Կարաքիլիսէ.

Բալուլ փաշայի երեւակայական փառալից յոյսերն ի գերենան, շատ քքաշեց, զնա ինքն ևս օսմանեան միւս գերեաց հետ խառնելով՝ քշեցին ի Ցիկիս:

Այն՝ որի հաւը Կալ-Մահմուտ 1635 թվին Պայազտոյ ուշագրաւ բերդի պալատը Բագրեանդայ և Մաղաղիի.... թշուառ հայոց ողջ 25 ամեայ անդադար աշխատութեամբն ի գլուխ հանեց: Այն՝ որ իւր ժամանակին տարած ինչ ինչ քաջագործութեանց առթիւ օսմանեան սուլթան Դ. Մուրադէն՝ Պարունեաց բերդի գերի շամանութիւնն առած կուգայ այնտեղ՝ ամայի, անշահեն լինելով՝ միայն երեք տուն բնուկից և մէկ ճերմակ-շուն

(պայազ—իթ) կըգտնէ, որ քաղաքը շենցնելով՝ այն օրուանից վերջնոյն անուամբ կըկոչէ Պայտակը:

թ.

Բագրեանդայ Ս. Յովհաննու վանքը ոռուսի գրաւելուն պէս՝ յիշեալ Քիւրդ Յովհաննէս եպիսկոպոս իր ընդհատած գործին թելը վերստին ձեռք առաւ։ Փառասիրութիւն և ագահութիւնը բազում անգամ մարդուս անվայել ընթացից ոտք զարնել կուտայ։ Ներսէս եպիսկոպոսի բացակայ լինելը, Բահլուլ փաշայի վտարանդիլը, ոչ պակաս ուրախութիւն եղաւ նորա համար, որք երկուստէք իւր ապօրինի գործոց արգելք կուտային։

Ահա այս ամենայն յաջողմունք ծանուցանելով նոյն վանուց միաբան Աբէլ վարդապետին, գրէր ընդ նմին զի յետագայ օրինակաք խնդրեն զինքն առաջնորդ իւրեանց, որ ինքն ուղարկեց նորա. որպէս զի զայնս արտագրելով՝ ստորագրեն վերջընթեր իւր համախոհիւք հանդերձ և յետ այնորիկ յղեն մին յանուն Վեհ. Կաթուղիկոսի և միւսն սինօգականաց Սրբոյ Էջմիածնի Արարատեան Մայր Աթոռոյն։

Օքնակ ճանապարհն էալուղիսակ

Սրբագնակատար Վեհապետ ամենողորմած Տէր մեր։

Խոնարհարար համբուրեմք սուրբ գարշապարդ Զեր և աղաշեմք որդիքաբար, յառաջնորդ յայտնի է Տէրութեան Զեր մեր վանքի կտոռավարութիւն այժմ շատ պակասեր է և անպայծառացեր յամենայն կողմանէ և պատճառն լաւ չեն նայեր գտանող առաջնորդքն. և մեք տեսանելով՝ սրտներս հովացեր է մեր վանքից, այնպէս և մեր վանքի միաբանքն, նորա համար վանքն իւեղն է մնացեր. ինչպէս հիմա Գալուստ վարդապետն փաշայի հիւքմով նստաւ և մէկ փարայի խէր չարաւ մեր վանքին և մեր։

Վասնորոյ աղաշեմք մեք ամենեցեան, շնորհես մեր վանքին առաջնորդ գրագիր Յօվհաննէս եպիսկոպոսն, որ մեք տեսաք անցեալ տարին և քո սուրբ աղօթիւքն նորա ձեւօք լաւ կու-

պայծառացնեմք վանքն. աւհիլի քան զառաջինսն և լաւ օգնական կը լինիմք նորա յամէն կողմանիցն. միայն մեր խնդիրն անտես չառնես, որ մեք էլ ջեր ծառայքն եմք և հոգեոր որդիք:

Յամի Յետոն 1828 Հոկտեմբեր 10

Ալաշկերտ գաւառ.

Աւագ քահանայ տէր Յակովը Մանկասարու

8էր Պօղոս Նաւակայ

Յովսէփ ծերունի վարդապետ ժամօրչնող

Աւեքիլ և լուսարար Արէլ վարդապետ

Ծերունի եղիազար վարդապետ

Յակովը վարդապետ

տէր ֆլան, տէր ֆլան.

2էր Մեծութեան խոնարհ ծառայք

Ռէս Գալուստ Մանկասարու

Ռէս Ղազար ֆլան գիւղի

Ռէս պյվազ Գեղասօրայ Կլն. Կլն.

Օքնակ ճանուարչն Սինօդականաց.

Սրբոյ Աժոռոյն Էջմիածնի Սրբազան Կառավարութեան  
Խոնարհաբար խնդիր

Մեք ներքոյ ստորագրողքս և մեր եղբայրքն ինչպէս Սրբազան կաթուղիկոսին գրեցաք և խնդրեցաք, այնպէս Զեղ տղաչեմք և խնդրեմք, որ խնայէք մեզ և մեր վանքին. և տաք մեզ և մեր վանքին առաջնորդ գրագիր Յովհաննէս եպիսկոպոսն, և մենք չենք կարող եօլայ գնալ Գալուստ վարդապետի հետն, որփաշայի ձեռօք նստաւ և մէկ փարայի խէր չարաւ մեր վանքին, թող զզարարն: Մեք մեր աչօք տեսաք զթովհաննէս եպիսկոպոսն, և հաւոնեցաք և Զեր ալօթիւք աւելի քան զառաջինն կու պայծառացնեմք մեր վանքն՝ օգնական լինելով նորա, միայն կաղաչեմք այս մեր խնդիրն կատարէք և մեզ Զեր որդի համարելով՝ անտես չառնէք:

(Սահմանադրութեան + նոյն անձանց).

8. Գ. Ստեփաննոս հայր Գեղամն գիրն կարդաց և շատ ուրախացաւ, և ասաց թող մանսար գրեն, որ բանն օրինաւոր լի-

նի. և լաւ իմանայք ահա ես աշխարհօրէն գրեցի, որ դու, Յակոբ վարդապետ, սիրեցեալ իմ, այնպէս գրես, ինչպէս գրած է, և չէ հարկաւոր գրել գրաբուռ այս ձևն լաւ է և չեն իմանալ այսուեղն ամենեին։ Ինչպէս գրած եմ, դու էլ այնպէս գրես աշխարհօրէն։

Երկու հատ տողած թապաղայ թուղթ ուղարկեցի, որ երկու մահսարներն գրես.ի վերայ նոցա և հասցէն չգրես, այնպէս ծալած թող մնայ, տուր տէր Յակովը բերէ։

ՅԱՀԱՆՆԷՆ Եպիսկոպոս։

Մինչ այսպէս Արէլ վարդապետ Յովհաննէս եպիսկոպոսի ներշնչութեամբ գուն գործէր նորա ցանկութիւնն իրագործել. միւս կողմէն Սիմէօն վարդապետ ի միաբանութենէ Ս. Էջմիածնայ Տէր Մարդարեան Դութաղցի Յակովը վարդապետի հետ ձեռք ձեռքի տուած նոյնպէս Գալուստ վարդապետի տնկման պատճառներ յերիւրելով՝ ոչ թէ յիշեալ կրօնաւորը, այլ եպիսկոպոս ոմն Գրիգոր անուն Բաբաջանեան խնդրէին ի տեղի նորա կացուցանել առաջնորդ։

Իսկ երիցս երանեալ Գալուստ վարդապետը զայս ամենայն տեսանելով՝ անվրդով հոգւով տանէր զլուծն ծանրութեան..., բազում անգամ՝ յիշեցուցանելով՝ իւր հակառակորդաց թէ— ես իբրև առաջնորդական սրբազան պաշտօն ըստանձնող մի ոմն. իմ խիղճ չի ներիր՝ թոյլ տալ ձեզ, ձեր քմահաճոյից համաձայն գործել, ոյր աղագաւ ցարդ զինուորեալ՝ բիւր ազգի բարուրանաց խոչնդուտներ յարուցանէք ընդ յաւառ իմ, որպէս զի այնու կարողանաք պաշտօնազուրկ առնել զիս։ Երէք ինչ որ կամիք, զի ճշմարտասիրին ճանապարհը փշոտ է. չեմ աղաչեր զձեզ՝ խնայելով ինձ ազգի և եկեղեցւոյ օգուտը զոհել ձեր կրից և շահուն։ Եթէ այսպէս մի օր, մի ամիս ևս որըբութեամբ կատարած լինիմ պաշտօնս, դարձեալ գոհ եմ, քան անազնիւ միջոցների գիմեմ, երկար ժամանակուայ մը համար։

Ուստի մի օր երբ Աղէքսանդր Ճաւաճաւածէ եկաւ վանքն, Սիմէօն և Յակոբ աբեղաները բողոքեցին նորին մեծութեան թէ Արէլ վարդապետ Գալուստ առաջնորդի թոյլուութեամբ Բահ-

լուլ փաշոյի աստ ամբարած 300 սոմար գարին սկսեր է վաճառել և ապա իւր խմած օղի և գինւոյ թողած պարաքը, որով կնքելով նու շահմարանի գուռը, խոստացաւ ըստ խնդրանաց նոցա՝ շնորհել իրենց մի ամբաստանագիր յանուն, վեհափառ կաթուղիկոսի վասն անհաւատարմութեան առաջնորդի, որով մարթասցին այլ ոմն առաջնորդ բերել ի տեղի նորաւ:

Միւս օր առաւօտեան Ահմեսն վարդապետ թէե կամեցաւ գնալ ընդ զօրու ի Ղարաքիլիսէ, խոստացեալ գիրն անտի առնելու անձամբ, սակայն պատրաստի ձի չգունելով չյաջողուեցաւ իրեն. այնուհետեւ ահ ու գողի առթիւ ևս յիշխեց ընդ հուապ ուղևորիլ, զի ճանապարհները երկիւղալի գարձեր էին, մէն մի քայլափոխիդ, մի խումբ աւտաղակաց կողջունէր, մարդ պէտք է եօթ դլխանի լինէր, որ կարսղանար անոնց մէջէն ճեղքէր, անցնէր, որ այդ էլ կըպակսէր իրեն:

Սակայն կեղծաւոր իւաբերային ոյինչ չի պակսիր. Աբէլ վարդապետ թէե ամբաստանուած, այնուամենայնիւ պատեհ առիթը ձեռքէ չփախցրեց. Գնաց մոտաւ առաջնորդարանը՝ իբրև հաւատարիմ ոմն ցուցանելով զինքն առ Գալուստ վարդապետ, խնդրեց ի նմանէ որ զինքն ևս ուղարկէ ի Ղարաքիլիսէ, ուր թերեւս կարողանայ հուր բարկութեան գեներալին շիջուցանել, նորա ներողամուռութեան արժանանալով:

Այսպէս լալահառաչ բազում ինչ կեղծ ու պատիր զրուցաւրութեամբ հրաման ստանալով նորին գերապատութիւնից գնաց, ոչ թէ ինչպէս ասաց ի Ղարաքիլիսէ, այլ ի Մանկասար գիւղ առ Յակսիլ վարդապետ տլու մականուանեալն և տէր Յակովը որք վանապատկան պտղին հաւաքելու գնացած էին անդ: Մանրամասնաբար պատմեալ նոցա եղելութիւնը՝ մնաց տեղւոյն մելիք Գալուստի մօտ, նորա միջոցաւ նախապէս պատրաստեալ հանրագրերը ստորագրել և մատնահարել տալ Ժողովրդեան միջէն քահանայից ոմանց և իշխանաց. վաղվաղակի նուիրակ Յակովը վարդապետ ուղարկելով ի Ղարաքիլիսէ, ուր ի ժամուն մոտանելով նա առ մելիք միրզայ Թագէսսն, որին Գալուստ վարդապետի կեղծ հրաժարականը մի և նոյն ժամանակ գրել տալով մատոյց գեներալին, որը, իբր միաբանութիւնից

յղուած ներկայացուցիչ նոյն աբեղային շնորհեր, Սիմէօն վարդապետի կուսակցութեան խոստացեալ գիրը:

Այսպէս թէ այնպէս նոքա նախ կաշառելով զմելիք քարտուղար Թաղէոսն՝ յաջողեցաւ այնու խաբել զնոյն զօրապետն և և զոմանս յաղդոյնոց անտի. ի նոոցանէ պէտք եղեալ գրերն և ստորագրութիւնքը առնելով՝ զկնի աւուրց ինչ վերադարձան ի վանք: Ուր դարձեալ Աբէլ վարդապետն սկսաւ զի՞նքն թաքուցանել խաբերայական ձեւերի տակ:

Այս եղաւ նորա պատասխանն առ Գալուստ առաջնորդն—աշխ, հայր սուրբ, այսքան դժուար ճանապարհորդութեանս միջոցին՝ ուրիշ ոչինչ կարողացայ առնել, բացի այն, որ տեղեկացայ Ա. Ճաւճաւածէ գեներալը յանուն վեհ. կաթուղիկոսի ընդդէմ մեր մի գիր է շնորհած տէր Յակովին, Սիմէօն և Յակովը վարդապետաց անտեղի ամբաստանութիւնք պարունակող. ուստի թոյլ տուր ինձ ևս ընդ տէր Յակովին երթալ անդ, գուցէ ուր հարկն է դիմելով՝ ազատել զմեզ մօտալուտ վտանգից:

Սակայն Սիմէօն վարդապետ այլ ևս չկարողանալով հանդուրժել շողաքորթի ըրածներուն, Պալհաւունի Պետրոս աղայի միջոցաւ ծանոյց նորա չար դիտաւորութիւնն և առած գրի բովանդակութիւնը Գալուստ առաջնորդին, որուն ինքն հաւաստի աղքիւրէ իրազէկ եղած էր:

Գալուստ առաջնորդ Աբէլ վարդապետի գաղտնի լարուած մեքենայութիւններից զգուելով՝ ի սուրբ Գեղարդն ուխտի գնաց յիշեալ Պետրոս աղայի ուղեկցութեամբ Աբէլ և տէր Յակովին տանելով իրենց հետի Պայազիտ, վասն զի ըստ խնդրանաց Ա. Ճաւճաւածէ գեներալի ի սակս ժանտախտի ծեր ըսուած Սահակ եպիսկոպոս յէջմիածնէն կաթուղիկոսի թոյլ-տուութեամբ սուրբ Գեղարդը բերած էր անդ: Այնտեղ էր նաև ի միաբանութենէ Ա. յէջմիածնի Կեսարացի Բարսեղ եպիսկոպոսը:

Գալուստ առաջնորդ յիշեալ սրբազան հարց ևս յայտնեց Աբէլի դաւադրութիւնը, իսկ նա ուրացաւ, երդուելով՝ յամենասուրբ Երրորդութիւն և ի սուրբ Գեղարդն, սաստիկ նզովե-

լով զանձն իւր հաւատացուց թէ այժմ ինչ որ Գալուստ առաջնորդ կըխօսի իմ վրայով՝ իւր հակառակորդները սխալ են հասկացրեր իրեն։ Եթէ ի Ս. Էջմիածին երթալու հրաման խընդրեցի, այն պատճառաւ որ Սիմէօն և Յակովը վարդապետաց մեր վրայ բարդած զրպարտութիւնքն երևան հանեմ։

Քննութիւնից իր անպարտ դուրս գալով՝ 300 զուռուշ ալ Գալուստ առաջնորդից դորա համար ճանապարհածախով ընդունելով Յակովը քահանայի հետ գնաց ի Ս. Էջմիածին, ուր հանրագրերը մատուցանելով՝ առ որս անկ էր, չարաչար բողոքեցին ըստ նմին օրինակի Գալուստ և Սիմէօն վարդապետաց վրայ, խնդրելով իւրեանց առաջնորդ նոյն քիւրդ Յովհաննէս եպիսկոպոսը։

Սակայն Սիւնչողոսական կառավարութիւն՝ իւր անդամ գեր, Մանուէլ վարդապետի առաջարկութեամբ, տակաւին նա (Յ. Ե.)ընդ ապաշխարանք վեհ։ կաթուղիկոսի և Ներսէս սրբազնի գոլով՝ բեկանեց նորա ընտրութիւնը։

Յայնժամ գալուստ առաջնորդը պաշտօնանկ ընելով՝ յանձնեցին զայն Գեղարդաքեր Սահակ եպիսկոպոսին, որն որ Աքէլ վարդապետի վերադարձին հետն առած ի Պայազոյ յաղթանակաւ եկաւ վանքը։ Սևս եկաւ, տարաւ զԳալուստ վարդապետ։ զնու իսկոյն առաջնողարանէն արտաքսելով՝ ուրիշ անզարդ սենեակ մը տարին, բանտարկեցին։ Հրամայելով իրեն 8 օր առանց փիլոնի արտաքոյ եկեղեցւոյ, 40 օր ևս ի մէջ եկեղեցւոյ ընդ հասարակ ժողովրդեանն ապաշխարել, զոր անթերի կատարեց ըստ կամաց նոցա։

Նորեկ առաջնորդ Սահակ եպիսկոպոս Աքէլ և Յովհաննէս վարդապետները իրեն գործտկալ կամ վէքիլ կարգելով՝ իրք մին ի գիմաց մայր Աթոռոյն և զմիւսն ի վանացու, բոլոր շարժական և անշարժ կայքը հաշուի առաւ մինչև ակնկալ կապերոը, այնու ամենայնիւ ոչ իւիք գտաւ մեղաւոր, կերած կամ մսխած յումպէտս։ Սակայն ինչ արած երկինքէն եկածը՝ գետինը պիտի տանէ, քանզի ըսուած է մինչև որ տանուտէրը չըռնեն, չեն կրնար տունը աւարի տալ։

Նմանապէս անահի բաժնած Սիմէօն վարդապետն ալ կամեցան

բռնել, աքսորել, բայց նոտ շուտ վախենալով՝ շունչն ի Դարա-  
քիլիսէ Ա. Ճաւճաւաձէ գեներալի քովն առաւ, որն որ զայն  
տեսած օրէն նորա արժանիքն ու ծառայութիւնքը գնահատած  
լինելով՝ ասպնջական եղաւ իրեն:

Գեներալն մի քանի օրէ վերջ գնալով ի Ա. Էջմիածին, տարաւ  
ընդ իւր և զնոյն աբեղայն: Ուր ներկայանալով նա վեհ կա-  
թուղիկոսին և Ա. Սինօդին բացատրեց վանուց մէջ վարագուրի  
ներքե միաբանաց ոմանց ի գործ դրած զեղծմանց տիտուր յի-  
շատակներ, որով արդարութիւնն մերկապարանց ի հանդէս  
գալով՝ պարտաւորեցաւ ստութեան Արէլի կողմն:

Վասն որոյ լսոտ խնդրանաց Սիմէօն վարդապետի գրեցաւ ի  
Սինոդական կառավարութենէ, առ ժամեայ առաջնորդական  
պաշտօնիւ յղուած յիւշ-Քիլիսէ վանքն Սահակ եղիսկոպոսին  
փութով վեր առնուլ ընդ իւր զԴալսւատ և զԱքէլ վարդա-  
պետօն իւրայնովքն հանդերձ և գալ ի Ա. Էջմիածին:

Բայց նախ քան զայս տնօրէնութիւն, Սահակ եպիսկոպոսը  
նախ քան ընդունել պաշտօնագրոյն՝ ալէծուփ վանուց կառա-  
վարչական ղեկը յանձնած լինելով Աքէլ վարդապետին, իսր  
օժիտ երջանկայիշատակ Խաչատուր վարդապետի ձին, 500 դա-  
հեկան, 1 արծաթեայ բաժակ, 1 արծաթեայ տուփ, 4 կանգուն  
կարմիր ադլաս, 4 մսացու կով, 8 ստերճ մաքի, 8 քոռ (սոմար)  
ցորեան, 1 տիկ պանիր, 1 տիկ իւզ, 1 բեռ հաճար առաւ, Ար-  
ծափ աւան հասած օրը՝ Սինոդի հրամանագիրն ընդունեց, ուս-  
տի այլ ևո յետ չդառնալով՝ սակս միւս վարդապետացն առաք-  
ման, ինքն միայն գնաց ի Ա. Էջմիածին:

Մայր Հայաստանի հարազատ զաւակաց հետ կարծես թշնա-  
մութիւն, գան ու զրպարապութիւն, սուրբն ու մահը կըծլի,  
ծաղկի փշալից տերեներ արձակելով՝ յառաջ անդր կընթանան  
նոցա հետ մըցելու, ուստի ճշմարտին և բարւոյն յաղթանակն  
առած փորձութեան բովէն գուրս կուգան նոքա—առաքինու-  
թեան և առաքելութեան քաջ զինուորներն—քան զոսկի զը-  
տեալ՝ թողնելով նոցա, ամբարիշտ հակառակորդաց, գերագոյն  
էակին վերջին անխուսափելի զատավճիռը:

—Դու ուղիղ գնայ, ծուռը իր պատիմը կըգտնէ — մեծանանց

խօսք է, ճար չկայ: Գալուստ վարդապետ աղջի և եկեղեցւոյ շինութեան համար պարսից պաղ ու խիստ ձեռքերէն կրած յաղդի աղջի տանջանացն, ծանր համարեց իրեն իւր պաշտօնակից սուրբ հարց շահատակութեան արշաւանքը: Նկատելով, որ ինքն արդէն բանդարկեալ անարգ վիճակի ենթակայացած, Սիմեոն վարդապետ հեռացած անտի, հետեւարար վանքի կործանումը մերձ է, հոգւոց հանեց, ձեռն ի ծնօտի դրած, զինչ նոր մանուկ լար և արտասուէր:

Յաւօք որոտի կսպասէր ելքին, մինչև որ Սիմեոն վարդապետ յէջմիածին յատենի հոգեւոր իշխանութեան դատը վաստկեց, մինչև որ ինքն իւր հակառակորդ կուսակցաց փոխադարձ պատժուիլ յուղելով՝ նոյն փափուկ և անձուկ միջոցին, նոցա յանցանաց ներում խնդրեց, որով նոքա անպատիժ մնացին դարձեալ ի վանս Ս. Յովհաննու:

Այդ խառնաշփոթ օրերուն մէջն էր գոգցես որ տակաւին սկսուած պատերազմը մեծ դեր կըխաղար ծայրագոյն Արեւելից մէջ, Մայր Աթուոյն միաբաններէն ոմանք, մեղնից անձանօթ իրաց համար, գրած էին առ վսեմաշուք Պասկեիչն, յորոց մին էր ինքն քիւրդ Յովհաննէս եպիսկոպոսն, որ ապտ իւր գիրը գաղտնի իր համակիր ընկերներէն նենգութեամբ ճանապարհից յետ բերել տուած էր, որ պատճառ դարձաւ իրեն վերստին եպիսկոպոսական աստիճանին բարձրանալու և թէ Ս. Յովհաննու վանուց վանահայրութիւն և իւր վիճակի առաջնորդութիւն ձեռք ձգելու:

Քանզի Պասկեիչն նոյն գրերի մասին գրած էր վեհ. կաթուղիկոսին, առանց գրողաց անուանքն յիշելու յայնմ. վասն որոյ Ասպետ Յովսէփ վարդապետ ի կողմանէ կաթուղիկոսի, գիտնալով նորա յեղյեղուկ միտքը, նոցա անուանքն իմանալու համար՝ կոչեց զնա Յովհաննէս եպիսկոպոս և հարցուց նման երդմամբ որ եթէ նոյն գրողաց անուանքն յայտնէ -կրկին եպիսկոպոսական պլտուին վեր առած առաջնորդական պաշտօնիւ կուղարկուի յիւշ-քիլիսէ, որով իսկոյն և եթ մի առ մի յայտնելով զմիտու և զանուանս նոցա, որք էին Զաքարիաս, Վուկաս և Արքահամ, ուստի Ասպետ Յովսէփ վարդապետի խոստմունքն կա-

տարուելով՝ ի 1829 ի մուտք յունվարի, առաջին օրն նոր տարոյ՝ նոր առաջնորդն Սիմեոն վարդապետի հետ ուղեկցելով՝ ժամանեց յիշ-քիլիսէ:

(Ըարութակելի)

Պ. Յ. ՄՈՒՐԱՏԵԱՆՑ.

## ԲԱՆԱՍԻՐԱԿԱՆ

ԵԵԾԸ ԴՊՐՈՑՈՒՄ \*)

(Եաբունակունեան և Աբը):

Մենք գանք վճռական պատասխանի. Պէտք է ծեծը, թէ չէ: Այս հարցմունքը շատ անգամ ենք լսել, և միշտ շփոթուել ենք պատասխանելու: Ի՞նչ կասէր բժիշկը, եթէ մի անձանօթ հիւանդ մօտենար և նորան թմրեցնէր այս հարցմունքով. Արդեօք խմբմ

(\*) Կարևոր ենք համարում այս տեղ նշանակել առաւել այն վրիպակները, որոնց պատճառով որ անցեալ տեարակում մարի շփոթութիւններ են առաջ եկել.

Եր. տող. պետ	կարեւոր ենք համարում այս տեղ նշանակել առաւել այն վրիպակները, որոնց պատճառով որ անցեալ տեարակում մարի շփոթութիւններ են առաջ եկել.	154 3 ուսուցիչ	158 26 կար' կինը.
155 13 (աւելացնել)	պատճառ- թիւնից իսկ յայտնի է, թէ ազգերը ծայրայեղ մո- լութիւններից յետոյ ծայ- րայեղ սուտ ճգնաւորու- թիւն են սկսել:	159 18 Herr B...	159 18 Herr B...
• 14 (Նոր տող) Բայց		160 17 ուր	160 17 ուր
157 7 նոցանից		• 20 բանը չը հասնի	• 20 բանը չը հասնի
• 30 արդիւնք		• 24 եր	• 24 եր
158 21 պիտի պատճառէ		161 8 Այսպէս	161 8 Այսպէս
• 25 ուր աւելի		• 24 (Նամակագրողի իսուրերը չակերտների մէջ նշանա- կել. նշնպէս և միւս կը- տորներում):	• 24 (Նամակագրողի իսուրերը չակերտների մէջ նշանա- կել. նշնպէս և միւս կը- տորներում):
163 28 կերպով միշտ կըկոչուի		163 28 կերպով միշտ կըկոչուի	